



ՅԵՐԵՂԱՆԵՐԻ ԱՐԴԱՐՏԻ 1898 Թ. ՅԱՆՆԱՐԵՐ.

Յիշատակարան գրոցս պատմագրաբար՝ զոր շինեալ է քաջ քարտուղարն՝ առաքելական եպիսկոպոսն եւ աստուածաբան վարդապետն Տէր Աստուածատուր՝ քուեր ողղի մեծ բաշտնապետին Յակոբայ Ովսանանց:

Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն: Ամենեցուն ճարտարապետն Աստուած՝ յառաջ քան զլիներն ժամանակաց՝ ընտրեաց ի մարդկանէ զորս ինքն կամեցաւ. և յիւրաքանչիւր ժամանակի ի նոյն և մի Հոգի Աստուծոյ յայտնէ ներգործութեամբ զնիւթս պաշտաճաւոր: և տնօրինէ նախագիտութեամբ նահապետս և մարդարէս: Հովիւս և հովուապետս տեսուչս և վերակացուս իշխան և դատաւոր: և յարաձգականս յաւիտենիւ ոչ գաղարէ ի ներգործելոյ՝ որպէս ասաց Մշմարտութիւնն՝ թէ Ես ընդ ձեզ եմ մինչ ի կատարած աշխարհի: Ըստ այսմ սարասի ի վաղձան ժամանակի և ի կէտ սուղական՝ որ ամենայն ծաղիկ թառամեալ էր և ամենայն տերեւ ցամաքեալ՝ յայտնեաց մեզ Աստուած ծաղիկ անթառամ՝ որոյ անուշահոտութիւնն ելից զտիեզերս ամենայն՝ զՏէրն տիեզերալուր: զՏէր Մկրտիչն՝ մականունն Ծաղաշ կոչեցեալ: Որ և եղև երկրորդ լուսաւորիչ ամենայն Միջագետաց՝ և պարծանք պարծանաց ամենայն քրիստոնէից: Եւ էր սա բնական ի նահանգէն Բաղիշու՝ ի Պոռ կոչեցեալ գեղջէ՝ որդի մեծատան՝ և աստուածարեալ քահանայի Առաքելոյ՝ և մօր բարեպաշտի Էին և սմա եղբարք Բ. Եւփանէս քահանայ՝ որ տղայ հասակաւ փոխեցաւ առ Բրիստոս եւ միւսն Արգար անուն՝ որ եղև երեւելի մեծ և փառաւոր: և պատուեալ յամենեցունց. որ ըզտուն հօր իւրոյ առաւել քան զառաջինն բարեկարգեաց՝ երկրորդ հայր Արահամ լեալ՝ կերակրելով զբազումս: Եւ բազմերջանիկ Տէր Մկրտիչս ի տղայութենէ սիրէր զվարս կրօնաւորական՝ սիրէր զկրօնաւորս և զվանակա-

նրս: Եւ սիրոյ լեալ արուեստից և ուսման՝ և հանապազ նմին հեռեւէր: Եւ էր տուեալ նմա շնորհք ի վերուստ՝ մինչ զի զամենայն զիւրաւ ուսանէր: և զամենայն դժուարին արուեստ միանգամ տեսանելով՝ նա գերագոյն քան զօրինակն ներգործէր: Եւ զուսումն աստուածաշունչ գրոցի զոր ինչ սա ի միում ժամուս այլ ոք զաւուրս Ժ. բաղում աշխատութեամբ ոչ կարէին ի միտ առնուլ: Եւ ամենեցուն հիանալի էր՝ ի վեր քան զտեսութիւն մտաց՝ մինչ զրեթէ ոչ ոք երեւցաւ յայսմ ժամանակի այսպիսի տիրական շնորհիւ զարգարեալ՝ առաքելաշնորհ և աստուածուսոյց՝ մինչ հնգեառասան զոլով ամաց եղև կատարեալ ուսմամբ և արուեստիւ իմաստութեամբ և վարդապետութեամբ՝ քաջ քարտուղար՝ անհամեմատ նկարօղ և ամենայն արհեստից ճարտարապետ: մինչ զի զամենայն արուեստ՝ զոր ինչ և կամէր՝ կարողութեամբն Աստուծոյ անսղալ առնէր: Մինչ զի հռչակեցաւ համբաւ շնորհաց սորա և իմաստութեան ընդ ամենայն երկիր: Եւ զի ոչ ունէր զսէր աշխարհի՝ բռնադատեալ եղև ի ծնողացն՝ եմուտ ի կարգ աշխարհի ոչ փոխելով զբարս իւր: այլ հանապազ ընդ կրօնաւորս լինէր: Եւ զի նախագիտութիւնն Աստուծոյ անօրինեալ էր զսա լինիլ փեսայ երկնաւոր հարսինն՝ եկեղեցւոյն Միջագետաց՝ զի սովաւ ուրախա(նա)լոց էր հարսն Բրիստոսի և ցնծալով մանկանց Սիօնի և բարձրանալ խաչին Բրիստոսի և ուրախանալ սովաւ տարտամ և տխուր ազգս հայկազեան՝ որ եղև իսկ Ձի մին որդի ծնանելով եղև մեռանել ամուսնոյն իւրոյ՝ զոր և ինքն զնոյն խնդրէր յԱստուծոյ՝ ազատ լինել և առաջնորդութեամբ Աստուած Սուրբ Հոգւոյն: Եւ ելեալ ի բնական նահանգէն՝ եկեալ բնակի յերեւելի և յականաւոր ապաստանի՝ ի քաղաքն Համիթ Շահաստան: Եւ ողորմութիւն Տեառն էր ընդ նմա և յաջողեալ էր ի գործս սորա: Զի յամենայնի Հոգին Աստուած էր թելադիր և գործակից սմա: Զի յօրէն յօրմէ հեռէ եմուտ սա ի Միջագետս՝ շարժեաց Հոգին Աստուած զսիրտ ամենայն մարդոյ ի սիրել զսա և զամենեցուն լեզու ի զովել և ի բարեբանել և ի բարեհամբաւել: Եւ երաց սմա Աստուած

զգուռն ողորմութեան, զի ամենայն ոք որ տեսանէր զսա, կտմէր և զհողին և սալ՝ յօժարութեամբ և զուարթութեամբ, և առատ սրտիւ։ Եւ ոչ եթէ միայն ազգ քրիստոնէից, այլ և թուրք, և թաթ, և թաթար, և քուրդ, և արապ, և ջհուտ, և ամենայն ազինք՝ ընդ տեսանելն, զգատիւ և զպարգես պատրաստէին, ձիս և ջորիս, և խիլայս մեծազինս՝ անասելի և անպատմելի։ Եւ ոչ եթէ միայն յիւր թեմն և յիւր վիճակն, այլ և յամենայն աշխարհաց գային՝ յարեւելից եւ յարեւմտից, եւ պարզեւատու լինէին, եւ պարգեսս բերէին, ոսկի, արծաթ, ականս պատուականս, կտաւս մեծազինս։

մինչ զի բազում ոմանք Ռ. եւ Ս. թանկաց պարգեսս բերէին։ Զի տարածեցաւ համբաւ սորա ընդ ամենայն աշխարհս, մինչև եհասաւ թագաւորն Պարսից և առ տէրն Եգիպտոսի, եւ էանց զմեծ ծովն մինչև ի պապն Հռոմայ, և ի Կոստանդնուպոլիս, մինչ զի վարչամկս ոսկեթելս և մեծազին պարգեսս առաքէին։ օրհնեալ է Աստուած։ Եւս առաւել սիրեցեալ եղև յաչս պարոնաց պարոնին, շահ Օթման պէկին, որ տիրէր ի Մառնայ մինչև ի ծովն Պոնտոսի, որ է Տրապիզոն։ Զի այնպէս քաղցրացոյց Աստուած զսիրտ բռնաւորին ընդգէմ սմա, զի զամենայն քրիստոնեայք, որ ընդ իւրոյ իշխանութեանն էր, եւ ի ձեռն սորա, և մեծապէս պարգեօք և տրօք մեծարեաց, և փառաւորեաց թագաւորական զգեստիւք, և արքունական երկվարօք։

մինչ զի զոր զգեցեալն էր արքայն՝ զնոյն զգեցուցանէր, և զսէրն զոր սիրէր և զպարգեսն՝ ոչ ոք կարէ ընդ զրով արկանել։

մինչ գրեթէ և ոչ ոք ի մարգկանէ, ի թագաւորացն քրիստոնէից, այսպիսի պարգեօք ճոխացոյց զոք ի հայրապետաց սրբոյ։ Եւ զչափ սիրոյն ի պարգեացն գիտացիր, զի յարաժամ Ռ. եւ Ս. թանկայ ի պարգեսս տայր։ Եւ ի գնալն առնա, ընդ առաջ ելանէր և համբուրէր, և ի վերայ իւրոյ թագաւորականի խալիչային նըստուցանէր, և զբան սորա ընդունէր իր զծառայի Աստուծոյ, զի սիրօղ էր բանին։

քանզի հրաման տայր բերել յիւրոց առաջնորդացն, և զգիշերն ի բուն տայր խօսել յաստուածաշունչ զրոց։ Եւ սա աստուածատուր շնոր-

հօքն և աստուածուոյց վարդապետութեամբ ընդ զամենեսեան յամօթ առնէր, և զթագաւորն հաւանեցուցանէր, և առնէր պարգեսս ի թագաւորէն, և օրքստօրէ Աստուած զօրացուցանէր զսա ի բանս իւր, և Հոգի Աստուծոյ էր ի վերայ սորա։ Եւ յետ Օթման պէկին փառաւոր Սուլթանն որդի նմին, Սուլթան Համզայն, զոր ինչ ականատես եղև ի հօրէն իւրմէ, այլ առաւել պատուով ընդունեցաւ, հայր ինքեան աւանդելով փոխանակ հօր իւրոյ։ Եւ մեծապատուով փառաւորէր զսա քան զամենայն մեծամեծս իւր, մինչ բազմաց ասել թէ և ինքն քրիստոնեայ է, զի այսչափ սիրէ և պատուէ զեպիսկոպոսն։ Եւ ձեռնադրեցաւ սա յաստիճան եպիսկոպոսութեան ի Տէր Կոստանդնայ կաթողիկոսէ Վահկեցոյ, որ էր ի մեծ թուականիս Հայոց Պէթր Մեծարեաց զսա և կաթողիկոսն զանաղան պատուով և պարգեօք, և հաստատեաց արքեպիսկոպոս ի վերայ ԻԴ. զաւաղանի։ Եւ ամենեքեան սիրով հնազանդեցան, և ընկալան զսա՝ իրրև զառաքեալ Աստուծոյ։ Եւ եղև բան սորա արդիւնաւոր ընդ ամենայն երկիր։ Եւ յաւուրս սորա ցնծային եկեղեցիք Հայաստանեայց և բարձրանայր եղջիւր քահանայից, և պայծառանայր հաւատս քրիստոսական, և ուրախանային ամենայն հաւատացեալք։ Զի յայտնեցաւ Հովիւ քաջ և արժանաժառանգ վիճակին պայազատ, որ զիտէ հովուել զբանաւոր զառնքն յարօտ անմահարար, և ի ջուր կենդանի՝ բազմադիմի և յորդառատ վտակօք, որ տուեալ է սմա առատապէս ի շնորհաց Հոգւոյն։ Զի օրէն պատմազրաց՝ յաւելեալ ի ճառս գովեստից, այլ մեք զնոյն շարադրեցաք, զոր ականատես եղաք, և յայտնի է ամենայն երկիր տեսողաց, այլ մի ըստ միով, զրել ձանձրութիւն է լսողաց։ Այլ համարեա թէ զամենայն տեսակ աստուածային շնորհաց՝ զոր յամենայն մարդիկք, ի սա միայն տեսանիւր, լի և անթերի։ Ընկերասէր, օտարասէր, աղքատասէր, խաղաղարար, խոնարհ և համբերող, ողորմած և առատասիրտ, մեծապարգև, զի յայսմ ժամանակի ոչ ոք կարէ զսա, և ոչ երես իրրև զսա, որպէս ասաց Տէրն։ Զրի առեք և ձրի տուք, զի սա միայն գտաւ արկանել

դքանքարն ի սեղանաւորս և բազում բա-
րեաց պատճառ եղև կարողութեամբն Աստու-
ծոյ: Նախ՝ զի եկեղեցիս խախտեալ ոչ որ
իշխէր քար մի ամբացուցանել և սա զամե-
նայն եկեղեցիս խախտեալ և զհնացեալ և
զհողաշէնս նոր նորոգեաց՝ կամարակալ և
զմբեթաձև, և բազում նորաշէնս որպէս
դիարձք Աստուածածինն ի զլուխ բարձր բեր-
դին Արդնոյ: Եւ երկրորդ՝ զի յաւելեաց յե-
կեղեցիս՝ բազում շուրջառս մեծազինս գիրքս
աւետարան և սկիհն պատուական և զարմա-
նալի և հանապաղ զնոյն բանս հոգայր: Եր-
րորդ՝ զի ոչ իշխէին համարձակ պաշտել յե-
կեղեցիս և յաւուրս սորա համարձակ պաշ-
տելին առաւել պաշտելն քան զոր յանա-
պատս և ի վանորայս: Զորրորդ՝ զի հալածէին
զքահանայս և հարկապահանջութեամբ տան-
ջէին առաւել քան զաշխարհականս և սա
կարողութեամբն Բրիստոսի զամենեւեան ազատ
արար ի թագաւորական հարկէն: Հինգերորդ՝
զի եկեղեցիք Միջագետաց ի ներքոյ դիմասա-
կան հարկի կային և եպիսկոպոսք մաքսա-
պետք զի զամենայն զոր ինչ առնուին ի քրիս-
տոնէից՝ ի մաքս տային և ոչ կարէին Ա.
հայ Աստուծոյ տալ կամ աղքատի և սա
զորութեամբն Աստուծոյ երարձ զմաքսն յե-
կեղեցեաց և ինքն ևս առնոյր ի պարոնացն
Ժ. և Դ. հազարով և բաշխէր եկեղեցեաց
աղքատաց և կարօտելոց: Վեցերորդ՝ զի վասն
սորա աղք կարգաւորաց առաւել սիրեցեալ
եղեն ի պարոնաց քան զառաջնորդս իւրեանց:
Եօթներորդ՝ զի ոչ որ իշխէր փիղոնով կամ
վեղարով շրջիլ և յաւուրս սորա յամենայն
ուրեք համարձակ զգնուին և քահանայա-
կան կարգօք շրջէին երեւելի փառօք: Ու-
թերորդ՝ զի անուամբ սորա բազմաց ազա-
տութիւն լինէր ի գատատանաց և ի առ-
գանաց և ի բռնաւորաց, մինչ զի ի ճանա-
պարհի ըմբռնէին զբազումս և յորժամ
տսէին թէ մենք Տէր Նաղաշի մարզն ենք՝
ազատ առնելն: Իններորդ՝ զի բազում գերիս
ազատեաց յանօրինաց, զորս գնելով և զորս
խնդրեաց ի պարոնաց և զորս յափշտակելով
ի ճանապարհին, առաքէր ի ծառայից իւրոց
սրս զօրեղս և սրտապինդս և խլէին զգե-
րիս յանօրինաց և բերէին ի նորաշէն վանս

իւր ապաստանի՝ ի Բարձր Աստուածածինն,
պահելով ժամանակս ինչ մինչև դային տեարք
ծառայիցն և տայր նոցա հանգերձս և նա-
ֆաղայս և ուղեորէր ի տեղիս իւրեանց:
Տասներորդ՝ զի զամենեցուն պակասութիւնն
և գնեղութիւնն և զվիշան յինքեան համա-
րէր և ամենեցուն օգնական լինէր՝ կերա-
կրելով պարգևս տալով և կարեկից լինելով
և միութեամբով բանիւք և արդեամբք: Մե-
տասներորդ՝ զի զրունք եկեղեցեաց հա-
նապաղ փակեալք կային և ոչ զոյր յեպիս-
կոպոսարանն սեղանատեղ և սա կարողու-
թեամբն Բրիստոսի այնպիսի սեղանատեղ
սահմանեաց, մինչ զի յամենայն ազգաց դա-
յին՝ ուտէին ըմպէին և առաւել տանէին
անինայ և անարգել առատապէս մինչ զի
պարոնայք զարմանային թէ ուստի՞ կարէ
պատրաստել ինչ որ բաւական լիցի այնչափ
ուտելոյ տանելոյ և պարգեւելոյ, ոմն ասելով
թէ քէմիայ ունի բազումք տսէին թէ դանձ
է գտեալ և փող մի չունէր այլ շնորհիւն
Աստուծոյ զայր նմա դանձ անպարտաւելի որ
յամեն օր Ծ. Թանկայ և Մ. մուսհէր նորա
սակաւն Ժ. և Կ. լինէր՝ ամէնն ի շինուած
սուրբ կաթուղիկէին սրբոյն Թէոդորոսի քեզ
օրինակ որ բանակն Մօսիսի յերիկունն դա-
տարկ լինէր ի մանանայէն ի լուսանալ առա-
ւօտուն լինէր ամենայն բարութեամբ՝ նոյն-
պէս և Աստուած լցուցանէր զտէրս մեր հո-
գեւոր ամենայն բարութեամբ: զի քան զմեծա-
մեծ թագաւորս աւելի բաշխէր՝ ձիս ջորիս
հանգերձս ոսկի արծաթ, ցորեան՝ մեծա-
տուր պարգեւօք: Եւ որքան առաւել բաշխէր
առաւել տայր նմա Բրիստոս, նա որ ասաց
Տուք և տացի ձեզ, և սա ճշմարիտ հաւա-
տայր՝ զի անսուտ է խոստումն, վասն որոյ
առնոյր ըստ հաւատոյն: Երկուստաներորդ՝
զի յայսմ ժամանակի սա միայն կատարեաց
զհրաման Տեառն իւրոյ որ ասաց, Բարի ա-
րարէք ատելեաց ձերոց և սա զամենայն ժա-
մանակս կենաց իւրոց սիրեաց զթշնամիսն և
բարի արար ատելեաց իւրոց և ամենայն չարի
փոխարէն բարի հատուցանէր: Վասն որոյ և ար-
գարադատն Աստուած զամենայն թշնամի սո-
րին անգնդատոյ կորոյս: Երեքտասներորդ՝
զի յաւուրս սորա եղև օգտութիւն մեզ

զի զմեռեալս քրիստոնէից ի քարշ տանէին, հայք և ասորիք և նեստորականք և ջհուաք, և թէ ԾՌ. դահեկան տային՝ ճարակ չկայր, և ի վալն նորա ընթացեալ մօտ ի սուլթանն, և ընդ բազում պարզեացն զոր ընկալաւ՝ խնդրեաց և զայն, և առեալ հրաման բարձրացուցանել զմեռեալս քրիստոնէից, և այս սովորութիւն եղև։ Դարձեալ ի ՊԶ. թուին նստի յաթոռ հայրապետական ի յԱմիթ Շահաստանի, և ի ԶԲ. թուին շինէ զԲարձր Աստուածածինն ի յԱրզնուց բերդն, ի Պ. և ԶԸ. թուին սկսանի վերանորոգել զամենազով և զամենահրաշն, զամենեցուն զարմանալին, զհրաշափառ կաթուղիկէն, որ յԱմիթ Շահաստանի յանուն սրբոյն Թէոդորոսի զինաւորին։ Եւ թէ որչափ աշխատանս կրեաց ի նմա՝ անասելի մինչ զրեթէ հոգանիւթ մարմին ոչ կարէր տեւել այնպիսի երկարախոնձ, յայրացանկ և զիշերատանջ չարչարանաց, որ իբրեւ զկենդանի նահատակ զԴ. ամ մարտիրոսական արիւն հեղ ի շինումն սուրբ եկեղեցւոյն, և աւարտեալ կատարեաց՝ զբարեթալարի յօրինուածով, անասելի և անպատմելի գեղեցկութեամբ, զի զլուխ զմրեթին բարձր էր քան զմնարայիցն, և Ը.ու.Թ. անկիւնով ձորացեալ, և ութուտան լուսամուտս ի զմրեթին, և բարձրութիւն լուսամտին ի չափ մարդոյ, և ո՞վ որ կարէ ընդ զրով արկանել զգանազան յօրինուածս զմրեթին վայելչութեան։ Զոր տեսեալ և ի խոր խոցեցան քրիստոսատեաց ազգն մահմետականք, և ձայն ետուն միմեանց որդիքն Հազարայ, և հռչակ հարեալ համբուեցին, և ամբաստան եղին առ սուլթանն Եղիպտոսի և առ թագաւորն Պարսից, և առ սուլթան Հոսամեցտանն, եթէ այսպիսի գեղեցիկ յօրինուածով բարձրացաւ եկեղեցին քրիստոնէից։ Զոր լուեալ նոցա, վառեցան չար նախանձու, և իսկոյն իսկ զեսպան և հրովարտակս առաքեցին առ սուլթան Համզէն, քակել զամենազով սուրբ կաթուղիկէն, և անտանելի սուղ հասեալ աղլին Հայոց, և ամենեքեան ի խոր խոցեցան, և յամենայն աչաց աղիողորմ արտասուս հեղուն, և ետուն կաշառս գանձս բազում, և ոչ կարացին աղաւտել, զի զամենահրաշ և զամենազով զհրա-

շալի զմրեթն քակեցին, հաւասար տնեւացն, և ամենեքեան քրիստոնեայք ի սուղ մտին։ Ո՛հ ո՛հ ո՛հ, ո՞վ կարէ պատմել զանտանելի սուգն և զաղիողորմ կոկիծն, զձայնն հատաչանաց և զողորս տարակուսանացն, և զկականաւոր աղաղակն, և զաղէտալի մորմաքումն, զի ամենայն սիրտ ի տրտմութեան էր և ամենայն աչք յարտասուս, ամենայն բերան յաղաղակ և ամենայն լեզու յաւազումն։ Եւ առաւել ևս արի այցելուն, և քաջ հովուապետն աէր Մկրտիչ, շինող սուրբ կաթուղիկէին, և ի սաստիկ խոցոյն և ի դառն կակճանայն տարաշխարհիկ եղև, և գնացեալ էանց ի ծովն Պոնտոսի, և եհաս ի Կաֆայ և յՍաամպօլ, և զցայդ և զցերեկ խոցեալ սրտիւ առ Աստուած աղաղակէր՝ այցելու լինել սուրբ կաթուղիկէին յառաջ քան զելանէն ի մարմնոյն, զի մի մոցէ խոցով ի գերեզմանն։ Այլ ողորմածն Աստուած, այն որ կատարին է խնդրուածոց և լաօղ աղօթից, տեսեալ զճերմեանդ սէր նորա, որ առ Աստուած և առ սուրբ կաթուղիկէն, և լուաւ Աստուած աղաչանաց նմին, և կատարեաց Աստուած զխնդրուածս նորա։ Սատակեաց Աստուած զայնոսիկ, որք քակեցին զզմրեթն, և յարոյց այլ թագաւոր Միջագետաց զԶհանգիր Խմիրզայն, և տեսչութեամբն Աստուծոյ նա խնդիր արար, և զիր և զեսպան առաքեաց Զհանգիրն և ամենայն մեծամեծքն և Ղատեստանն, և տանուտարքն քրիստոնէից և ամենայն քահանայքն՝ ժողովրդովք միաբան, զիր զրեցին հեռ պարոնաց թղթին, Բ և Գ անգամ, և մեծաւ ջանիւ առաքեցին ի Կաֆայն, և բերին զամենեցուն զտնչալին, զտրհական զլուխն, զտէր Մկրտիչն՝ մեծաւ պատուով, և միաբան ընդ առաջ կլին երկու աւուր ճանապարհ և ընկալան մեծաւ պատուով, ուրախութեամբ և ցնծութեամբ, զի յօրէն, յօրմէ հատեւ ելեալ էր սա ի Միջագետաց, ամենայն եկեղեցիք ի տրտմութեան կային, որպէս զմայր որդեմեռ ի տարակուսանս կային և ամենայն քրիստոնեայք ի արտմութեան։ Վասն որոյ ի զալն սորա ցընծացան ամենայն քրիստոնեայք և բերկրեցան ամենայն եկեղեցիք, և զուարճացան մանկունք Սիօնի։ Եւ սա արիացեալ ի Հոգւոյն

Սրբոյ, առեալ հրամանն ի պարտնէն, և վ. թանկայ պարտնացն ետ և մեծամեծացն, և վերստին նորոգեաց շնորհօքն Բրիստոսի և ողորմութեամբ նմին, Եւ բնակիչք քաղաքին քահանայք և ժողովուրդք միաբան օգնական եղն՝ աշխատելով, զրամ տալով, կերակուր բերելով, մշակ տալով՝ աղքատք և մեծատունք միամիտ քաջութեամբ և բոլոր հաւատով ջանացին, և ի Ժ. օրն կատարեցին զղուպայն ի շինելոյ: Եւ առաջիկայք ժողովրդեանն և երեսի թանուտէրք էին՝ Շահրբաման Թուրքուրանցի և ոսկերիչ Սատաղէն, որ էր երեսփոխան և հրամանատար, և Ալէքսիանոս ոսկերիչ, և երկայն Դանիէլն, Արա-համն, և Սիմէօն զարբինն, որ ինքեանք տալին ինչս բաղումն և կերակուրս, և զամենեւեան յորդորէին ի գործառութիւն սուրբ Կաթուղիկէին: Եւ կատարեցաւ սուրբ Կաթուղիկէն ի Պ. և Ղ. Թուին, յօգոստոս ամսոյ ի Զ. օրն երկուշարթի ձեռամբ վարպետ Նէքամատին: Եւ յորժամ ետես արհիական զուխն եկեղեցւոյ և աստուածաբան վարդապետն տէր Մկրտիչ զսուրբ Կաթուղիկէն կատարեալ, մեծաւ ուրախութեամբ զոհացաւ զԱստուծոյ, և մոխրաթաւայ երեսօք օրհնէր զամենազօրն Աստուած, և ցնծայր և պարէր ի դաւթիս եկեղեցւոյ, որպէս վերինաւոր փեսայ ի մաքուր առադաստին, և զարդարեաց զեկեղեցին ամենայն կահիւք և զարդուք: Եւ բերեալ ի Տրապիզոնու զմեծ սկիհն զանազան օրինուածով, ոսկեզօծ և յոյժ պատուական, որ ոչ ուրեք դասնի այնպիսի փառաւոր սկիհ, փարթամ և գերաշխարհիկ, Ը. և Զ. մղղալ քուլինայ արծաթ, ոսկեզօծ և մինաքարի: Եւ ի Կաթայն գնացեալ և ինքն շինեալ նորաձե նաշխ խաչաձե, ետ գործեալ շուրջաւ մեծագինս բաղմախաչեան: Եւ զհրաշալի և զքնաղաղարգ պատուական սուրբնշանն Բրիստոսի բերեալ ի Կաթայն, որ ունի մասն ի խաչափայտէն Բրիստոսի, և բուն սուրբ նշանն ի լուսափայլ ականց, և ի սիրտս խաչին զԲրիստոս բեւեռեալ յոսկոյ ձուլածոյ: Եւ թէ ուստի՝ իցէ հրաշալիս այս պատուական սուրբ նշան՝ զսա պապն Հռօմայ պարգեւաց մեծ վարդապետին Սարգսի Կաթայեցւոյն, յորժամ գնաց ի Հռօմ: Եւ ի գնալն

տէր Մկրտչին ի Կաթայն՝ մեծ վարդապետն Սարգիս ընկալաւ մեծաւ պատուով, և ընդ բազում մեծարանացն և պատուոյն, պարգեւաց տէր Մկրտչին զսուրբ և զհրաշալի զպատուական սուրբ նշանն, զոր ընկալեալ մեծաւ ուրախութեամբ, և բերեալ մեծ պարգեւք տանս Հայոց՝ ի սեփհական աթոռն իւր ի յԱմիթ մայրաքաղաքն ի սուրբ կաթուղիկէն, զոր ինքն շինեալ էր: Եւ եհաս յաւուր տօնի սուրբնշանին Վարադայ, և զօրն զայն տօն մեծ կարգեաց յանուն սուրբ Նշանին, և սահմանեաց ամ յամէ յամենայն տարի զնոյն օր մեծ տօնախմբութեամբ խրախուծին առնել, բաղմութեամբ հաւատացելոց ուխտ մեծ կատարել՝ զօր զպատեան սուրբ Նշանին ի փառս Բրիստոսի Աստուծոյ մերոյ: Եւ զսուրբ և զհրաշալի սուրբ Նշանն և զպատուական սկիհն, և զհանդիսաւոր շուրջաւն ամենափայլուչ և զայլ գեղեցիկ շուրջաւն և զայս հրաշալի Յայմաւաւրքս երես յիշատակ բարի ի սուրբ Կաթուղիկէն, և զտարեղիւրքն ևս յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն իւրոց՝ Առաքել քահանային և Հախս խաթունին, և եղբարց իւրոց՝ Յովաննէս քահանային և պարոն Արղարին, որք ի Բրիստոս են հանդուցեալ՝ որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի: Վասն որոյ արտահառաչ տենչմամբ աղաչեմ զհանդիպողքդ, որք հանդիպիք ի սուրբ Կաթուղիկէն, և սուրբ զրոցս, և սուրբ Նշանին, և հրաշալի սկիհն, և փայլեալաւն շուրջաւն՝ յիշեցէք ի մաքրափայլ աղօթիս ձեր զարժանին յիշման զտէր Մկրտիչ արքեպիսկոպոսն և զաստուածաբան վարդապետն, և զծնօղս նորին, և զփծուն ծրօղս ևս ընդ նմին: Ի թուականութեանս Հայոց կրկին քառիւք հարիւրօք, և երկ յորեկին ընդ նմին երկերիւրօք հանդերձ, և եւիւք ընեւօք աւարտելօք, Հայր իմ հոգեւոր, զծրօղս մի մոռանար, զի հոգով չափ ծառայ եմ քո սուրբ աղօթիցն:

Այն յիշատակարանը կցած էր իմ ժողովածուի թ. 21. «Յաղագս մարդկային հոգւոյն» վերնագիրը կրող ձեռագրին, որ է թղթեայ, նօսրագիր, բառինականից ի հայ լատինականեալ ձեռամբ Ստեփաննոսի Իլովացւոյ, ի թ. 1786: (=1668), Տ. Յակոբ կաթուղիկոսի ժամանակ, Ս. Էջմիածնում գրուած, Խ. Վ.